



Ներդրումներ դեպի ապագա

ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

31 հոկտեմբերի 2025թ.

* Ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա

«Ուրախ ենք արձանագրել ևս մեկ հաջող եռամսյակ, որը վկայում է Ակբա բանկի զարգացման և բոլոր բիզնես ուղղություններով կայուն աճ ապահովելու կարողության մասին: Մեր կատարողականը գերազանցել է տարեկան պլանի մի շարք ցուցանիշներ՝ պայմանավորված բիզնեսի բնական աճով, թվային նորարարություններով և հաճախորդների անսասան վստահությամբ:

Մենք կենտրոնացած ենք այս դրական միտումը մինչև տարեվերջ պահպանելու վրա՝ շարունակելով ամրապնդել մեր շուկայական դիրքերը, իրականացնել ռազմավարական առաջնահերթությունները և փակել 2025 թվականը՝ որպես Ակբայի պատմության ամենահաջող տարիներից մեկը»:

Հակոբ Անդրեասյան

«Ակբա բանկ» ԲԲԸ

Գլխավոր գործադիր տնօրեն

- **ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**
- 2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՑ ԱՎՆԱՐԿ | 2025 3-րդ եռամսյակ

«Հուսալի, դիմացկուն և թվային ուղղվածությամբ.
Նվիրված կայուն աճին և նորարարություններին»

- ▶ Հայաստանի առաջատար **ունիվերսալ բանկերից մեկը**, որի առաքելությունն է իր ինքնատիպ և նորարարական լուծումներով նպաստել **հայկական հասարակության կայուն զարգացմանը**:
- ▶ Հզոր և դիվերսիֆիկացված **ֆինանսական խումբ**՝ կենսաթոշակային ֆոնդերի առաջատար կառավարիչ **Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթի** և լիզինգի շուկայի առաջատար **Ակբա Լիզինգի** հետ միասին:
- ▶ **Նոր ստացած Ba3 վարկանիշ** կայուն հեռանկարով շնորհված **Moody's**-ի կողմից, ինչը արտացոլում է Ակբայի ամուր հիմքերը և համապատասխանությունը Հայաստանի սուվերեն վարկանիշին:
- ▶ **Ցուցակված Հայաստանի ֆոնդային բորսայում** և բաժնետերերի դիվերսիֆիկացված բազայով, ներառյալ ուժեղ ինստիտուցիոնալ գործընկերներով և բաժնետոմսերի հրապարակային ազատ շրջանառվող մասով:
- ▶ **Հանձնառու կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին**՝ հիմնված խիստ ռիսկերի կառավարման և համապատասխանության գերազանցության վրա:
- ▶ **Լայն և հավատարիմ հաճախորդների բազա**՝ թվային հասանելիության և ժամանակակից բանկային փորձի վրա ռազմավարական շեշտադրմամբ:

671,000+

ԱԿՏԻՎ
ՀԱճԱՆՈՐԴՆԵՐ

66

ՄԱՍՆԱՃՅՈՐԴԵՐ

1,800+

ԱՆԻՍՏԱԿԻՑՆԵՐ

883,000+

ՔԱՐՏԵՐ

41,000+

ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐ

FitchRatings

BB- RATING

Long-term Stable Outlook

94.4%

ԹՎԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՄԱԿԱՐԱՐ ԿԵԻՌ

MOODY'S **NEW**

Ba3 ԿԱՐԿԱՆԻՇ
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՑ ԿԱՅՈՐՆ
ՀԵՌԱՆԿԱՐՈՎ



ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ | 2025 3-րդ եռամսյակ

«Հավասարակշռված սեփականություն՝ ապահովված ուժեղ ինստիտուցիոնալ կառույցների և հանրային ներկայությամբ»

10% 

Պրոպարկո
«Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD)» խմբի դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թեև: Բանկի բաժնետեր է 2024թ. դեկտեմբերից

2.24% 


Սակամ Ինտերնասիոնալ
Սակամը հանդիսանում է Ֆրանսիական Կրեդի-Ագրիկոլ (Crédit Agricole) բանկային խմբի ներկայացացուցիչ և բանկի բաժնետեր է 2006թ.-ից

12.76%

Ազատ շրջանավոր մաս (free float)
Այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք միասին (այդ թվում՝ աշխատողները) տիրապետում են ազատ շրջանավոր բաժնետոմսերին (ընդհանուր 5400+ անձ)

75% 

Ակբա Ֆեդերացիա
Ակբա Ֆեդերացիան 2017թ.-ից ի վեր հանդիսանում է Ակբա բանկի Նշանակալից մասնակից, հիմնադրվել է 2017թ.-ին 10 Գյուլացիական Փոխօգնության մարզային Միավորումներ (ԳՓՄՄ) հասարակական կազմակերպությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրը գործում է Հայաստանի մեկ մարզում





ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2025թ. 3-րդ եռամսյակ

«Ուժեղ և հավասարակշռված աճ բոլոր հիմնական ոլորտներում, որն ամրապնդում է Ակբայի ամուր դիրքերը Հայաստանի առաջատար բանկերի շարքում»



ԱԿՏԻՎՆԵՐ

985.4 մլրդ ՀՀ դրամ
(\$ 2,576 մլն)

3-րդ խոշորը շուկայում
8.23% մասնաբաժնով



ՎԱՐԿԵՐ

701.9 մլրդ ՀՀ դրամ
(\$ 1,835 մլն)

3-րդ խոշորը շուկայում
9.66% մասնաբաժնով



ԱՎԱՆԴՆԵՐ

622.7 մլրդ ՀՀ դրամ
(\$ 1,628 մլն)

3-րդ խոշորը շուկայում
8.5 % մասնաբաժնով



ԿԱՊԻՏԱԼ

183.6 մլրդ ՀՀ դրամ
(\$ 480 մլն)

4-րդ խոշորը շուկայում
8.05% մասնաբաժնով



ԼԻԻՆԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

100.6 մլրդ ՀՀ դրամ
(\$ 262.8 մլն)

1-ինը ոլորտում



ԶՈՒՏ ՇԱՐՈՒՅԹ

26.6 մլրդ ՀՀ դրամ
(\$ 69.5 մլն)

- ▶ Ակբան **գերակատարել** է իր տարեկան պլանի մի շարք ցուցանիշներ՝ պայմանավորված **բիզնեսի բնական աճով** և հիմնական ուղղություններում **ուժեղ արդյունքներով**:
- ▶ Հիմնական ցուցանիշների կայուն աճը վերահաստատում է Ակբայի ամուր դիրքը՝ **Հայաստանի առաջատար 3 բանկերի շարքում**:
- ▶ **Լիզինգի ոլորտում առաջատարությունը**, ինչպես նաև վարկային ու ավանդային **պորտֆելների շարունակական աճը** վկայում են բանկի կայուն զարգացումը՝ համահունչ ոլորտային միտումներին:
- ▶ **Կապիտալի աճը** համահունչ է բանկային համակարգի միջին աճի մակարդակին՝ ապահովելով կայուն հիմք երկարաժամկետ և ռազմավարական աճի համար:
- ▶ **Բարձր շահութաբերությունը (26.6 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ)** ընդգծում է բանկի ֆինանսական ներուժը, որը գերազանցել է բանկային համակարգի միջին մակարդակը:
- ▶ Հավասարակշռված արդյունքները վկայում են Ակբայի հանձնառությունը՝ **ձևավորելու երկարաժամկետ արժեք** և դրական ազդեցություն ունենալու **Հայաստանի իրական տնտեսության** վրա:



**ԱՎՏԻՎՆԵՐԻ
ԸՆԴՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

ROA

3.7 %

տարեկանացված



**ԿԱՊԻՏԱԼԻ
ԸՆԴՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

ROE

20.5 %

տարեկանացված



**ԾԱԽՍԵՐ/
ԵԿԱՄՈՒՏԵՐ**

CIR

41.8 %



**ԿԱՊԻՏԱԼԻ
ՀԱՄԱՐԺԵՈՒԹՅՈՒՆ**

CAR

23.4 %



**1 ԲԱԺՆԵՏՈՄԱՆ
ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ԸՆԴՈՒՅԹ**

EPS

5,957 ՀՀ ԴՐԱՄ
(\$ 15.6)

տարեկանացված



**ԹՎՅԱՅԻՆ
ՕԳՏԱՏԵՐԵՐ**

(ԱՄՍԱԿԱՆ ԱՎՏԻՎ)

54%

- ▶ **Բարձր շահութաբերություն** – Կապիտալի **20.5%** և ակտիվների **3.7%** շահութաբերության ցուցանիշները ընդգծում են Ակբա բանկի բարձր եկամտաբերությունը՝ երկուսն էլ գերազանցելով բանկային համակարգի միջին մակարդակը:
- ▶ **Ուժեղ կապիտալի բազա** – **Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցը 23.4%** է, զգալիորեն բարձր օրենսդրությամբ սահմանված նվազագույնից, ինչն ապահովում է ֆինանսական կայունություն և աճի ներուժ:
- ▶ **Բարելավվող արդյունավետություն** – **Ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը (CIR) 41.8%** է, ինչը վկայում է ծախսերի արդյունավետ կառավարման և գործառնական արդյունավետության շարունակական բարելավման մասին:
- ▶ **Թվային ուղիների ընդլայնվող օգտագործում** – **Ակտիվ հաճախորդների 54%-ը** ամեն ամիս օգտվում է Ակբա բանկի թվային ուղիներից, ինչը փաստում է շարունակական առաջընթացը թվային փոխակերպման ոլորտում:
- ▶ **Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը շարունակում է աճել՝** վկայելով կայուն շահույթի աճի և բաժնետերերի համար ավելացող արժեքի ստեղծման մասին:



ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱԳԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կայուն աճի խթանում» թվային գերազանցության և հաճախորդակենտրոնության շնորհիվ»

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍՈՐԿՄԱՆ ՈՐԱԿ

Հաճախորդը մեր բոլոր գործողությունների կենտրոնում է՝ սկսած պրոդուկտի մշակումից մինչև ծառայությունների մատուցում և հարաբերությունների կառավարում

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ

Մենք ներդրումներ ենք կատարում թվային հարթակներում, ավտոմատացման և արհեստական բանականության մեջ՝ ավելի արագ, ավելի խելացի և մատչելի բանկային ծառայություններ մատուցելու համար

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ և ԿԱՅՈՒՆ ԲԱՆԿԻՆԳ

ԲՍԿ սկզբունքներն առաջնորդում են մեր ռիսկերի կառավարման, պրոդուկտների մշակման և շահառուների հետ ներգրավման ռազմավարությունները

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳԵՐԱԶՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք ներդրում են կառուցվածքային, տեխնոլոգիական և գործընթացային բարելավումներ արդյունավետությունը, ծախսերի վերահսկողությունը և սպասարկման որակը բարելավելու համար

ԱԿՏԻՎՍԱՏԱՑՎԱԾ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ

Մենք կենտրոնանում ենք գործընթացների ամբողջական օպտիմալացման և ավտոմատացման վրա՝ արագություն, կայունության և գործառնական գերազանցություն ապահովելու համար

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱՆՆԵՐԸ



շուրջ 15%

Վարկային և ավանդային պորտֆելների տարեկան աճ



շուրջ 20%

ROE
Կապիտալի շահութաբերություն



շուրջ 40%

Շահագործման գործակից (Եկամուտներ/ծախսեր)



700.000+

Ակտիվ հաճախորդներ 2025թ. տարեվերջին


- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- **2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ԱԿՏԻՎՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ| 2025թ. 3-րդ եռամսյակ


«Ակտիվների կայուն աճ՝ պայմանավորված կապիտալի և բիզնեսի ընդլայնմամբ: Ակբան շարունակում է մնալ ակտիվների մեծությամբ առաջատար 3 բանկերի շարքում»

Ակտիվներ, մլրդ ՀՀ դրամ




- ▶ Ընդհանուր ակտիվները 2025թ. 3-րդ եռամսյակի ավարտին կազմել են **985.4 մլրդ ՀՀ դրամ**, ինչը կազմում է բանկային համակարգի ակտիվների **8.2%-ը**՝ վերահաստատելով Ակբայի դիրքը Հայաստանի առաջատար երեք բանկերի շարքում:
- ▶ Ակտիվները աճել են **4.5% նախորդ եռամսյակի համեմատ** և **5.8% տարեկազբից**՝ արդեն իսկ գերազանցելով տարեկան պլանավորված թիրախը:

Պարտավորություններ և կապիտալ, մլրդ ՀՀ դրամ




■ Պարտավորություն ■ կապիտալ

- ▶ Ընդհանուր կապիտալը հասել է **183.6 մլրդ ՀՀ դրամի**, ինչն արտացոլում է **5.5% աճ նախորդ եռամսյակի համեմատ** և **12.3% աճ տարեկազբից**, գերազանցելով 2025թ. տարեկան պլանը:
- ▶ Ընդհանուր պարտավորություններն աճել են կայուն տեմպով՝ **4.2% նախորդ եռամսյակի համեմատ** և **4.4% տարեկազբից**, գրեթե հասնելով տարեկան պլանային ցուցանիշին և ակնկալվում է, որ կգերակատարվեն մինչև տարվա ավարտը:

Համախառն վարկային պորտֆելն ըստ բիզնես ուղղությունների, մլրդ. ՀՀ դրամ



- ▶ Համախառն վարկային պորտֆելը (ներառյալ լիզինգը) 2025թ. 3-րդ եռամսյակի ավարտին կազմել է **701.9 մլրդ. դրամ, աճելով 3.5%** նախորդ եռամսյակի համեմատ **և 11.5%** տարեկազբից, ինչը կազմում է բանկային համակարգի վարկային պորտֆելի **9.7%-ը**:
- ▶ Ակբան գերակատարել է իր **3-րդ եռամսյակի վարկային պլանը** և չարժվում է դեպի տարեկան նպատակի իրականացմանը:
- ▶ Վարկային պորտֆելի **77%-ը ՀՀ դրամով տրամադրված վարկերն** են, ինչը վկայում է տեղական արժույթով վարկավորման բարձր մակարդակի և արտարժույթային ռիսկերի ցածր ազդեցության մասին:
- ▶ **5C վարկերը** կազմում են սպառողական վարկերի մոտ **74%-ը, աճելով տարեկազբի 70%-ի համեմատ**, ինչն ընդգծում է մանրածախ վարկավորման թվայնացման շարունակական առաջընթացը:

Ֆինանսական վարձակալություն, մլրդ. ՀՀ դրամ


- ▶ **Վարկային պորտֆելի բարձր որակը** պահպանվում է, 3-րդ խմբի վարկերը կազմում են **2.7%**, ինչը վկայում է առողջ վարկային պորտֆելի մասին:
- ▶ Վարկային կորուստների գծով մասնահանումները **աճել են՝ համահունչ համակարգային միտումներին**, արտացոլելով ռիսկերի պահպանողական կառավարում՝ աճող պորտֆելի պայմաններում:
- ▶ Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պորտֆելը հասել է **100.6 մլրդ. ՀՀ դրամի՝ աճելով 1%** նախորդ եռամսյակի համեմատ **և 8%** տարեկազբից:
- ▶ Ակբան շարունակում է պահպանել իր **#1 դիրքը լիզինգի շուկայում**, ամրապնդելով իր առաջատար դերը ՓՄՁ ֆինանսավորման և ներդրումների խթանման ոլորտներում:

Ավանդների և թողարկված պարտատոմսերի պորտֆելն ըստ բիզնես ուղղությունների,

մլրդ ՀՀ դրամ




33.6 մլրդ ՀՀ դրամ և 31 մլն ԱՄՆ դոլար

Թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը 30.09.2025թ. դրությամբ

15


Գործող տրանշների քանակը (9 դրամային և 6 դոլարային)

Ավանդների և թողարկված պարտատոմսերի պորտֆելի արժույթային կառուցվածքը




- ▶ Ավանդների և պարտատոմսերի պորտֆելը ցուցադրել է կայուն աճ՝ պայմանավորված մանրածախ ու կորպորատիվ ավանդների ընդլայնմամբ և հաճախորդների բարձր վստահությամբ:
- ▶ Պորտֆելը հասել է **622.7 մլրդ դրամի, կազմելով բանկային համակարգի ավանդների 8.5%-ը և աճելով 2.4% եռամսյակային կտրվածքով**՝ պահպանելով կայուն ներհոսքեր հաճախորդների բոլոր սեգմենտներում:
- ▶ Պորտֆելի աճը գերազանցել է շուկայի միջին աճի տեմպերը՝ շնորհիվ մեր ավելի քան **571,000 ավանդատուների** վստահության և հավատարմության:
- ▶ Պորտֆելի **67%-ը ՀՀ դրամով** է, ինչն ամրապնդում է բանկի ֆինանսավորման կայունությունը, ապահովում է կայուն աճ և հաղթահարում դոլարիզացիան:


Ընդհանուր կապիտալ, մլրդ. ՀՀ դրամ



Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ



Զուտ շահույթ, մլրդ. ՀՀ դրամ



- Ն1 Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ
- Սահմանային մակարդակ

- ▶ 2025թ. 3-րդ եռամսյակի տվյալներով Ակբա բանկի ընդհանուր կապիտալը կազմել է **183.6 մլրդ. ՀՀ դրամ**, գերազանցելով տարեկան պլանը և ապահովելով **12.3% աճ տարեսկզբից** և **5.5% աճ նախորդ եռամսյակի համեմատ**, ինչը վկայում է շարունակական ամրապնդման մասին:
- ▶ Չնայած կապիտալի կայուն աճին ողջ բանկային համակարգում՝ Ակբայի երկնիչ աճն ընդգծում է նրա ամուր և դիմացկուն դիրքը՝ Հայաստանի առաջատար բանկերի շարքում:
- ▶ Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը (**CAR**) **23.39% է՝ զգալիորեն բարձր** ԿԲ սահմանած նվազագույն **11%-ից** և բանկի սեփական պլանային նպատակից, ինչը վկայում է բարձր ֆինանսական կայունության և կապիտալի զգուշավոր կառավարման մասին:
- ▶ Զուտ շահույթը շարունակել է իր աճի միտումը՝ հասնելով **26.6 մլրդ. դրամի, ինչը 24.3%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ**, գերազանցելով եռամսյակային պլանը և ամրապնդելով Ակբայի դիրքը՝ որպես շահույթի գծով Հայաստանի առաջատար երեք բանկերից մեկը:



ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ |


2025թ. 3-րդ եռամսյակ

«Ակտիվների և կապիտալի բարձր շահութաբերություն, ծախսեր/եկամուտներ գործակցի շարունակական բարելավում»

Ակտիվների շահութաբերություն

ROA


տարեկանացված



Կապիտալի շահութաբերություն


ROA

տարեկանացված



Ծախսեր/Եկամուտներ

CIR




- ▶ Ակտիվների շահութաբերությունը (ROA) բարձրացել է մինչև 3.7%, գերազանցելով ինչպես պլանային նպատակը, այնպես էլ բանկային համակարգի միջին 3.6% մակարդակը՝ ընդգծելով Ակբայի ակտիվների արդյունավետ օգտագործումն ու բարձր շահութաբերությունը:
- ▶ Կապիտալի շահութաբերությունը (ROE) հասել է 20.5%-ի, գերազանցելով պլանը, պահպանվելով համակարգային միջին 21.6% ցուցանիշին մոտ և արտացոլելով կապիտալի արդյունավետությունն ու բաժնետերերի արժեքի շարունակական աճը:
- ▶ Գործառնական արդյունավետությունը շարունակել է բարելավվել, ծախսերի և եկամուտների հարաբերակցությունը (CIR) բարելավվել է 4.8 տոկոսային կետով տարեսկզբից և 1 տոկոսային կետով նախորդ եռամսյակի համեմատ, ցուցադրելով պլանային մակարդակից ավելի լավ արդյունք և վկայելով ծախսերի արդյունավետ կառավարման, բարձր արտադրողականության և կայուն եկամտաբեր մոդելի մասին:



ՀԱՃԱՒՈՐԴՆԵՐԻ ԱՃԸ | 2025թ. 3-րդ եռամսյակ

«Հաճախորդների և քարտերի գծով առաջատարություն՝ պայմանավորված թվային տեխնոլոգիաների կիրառմամբ»


Ակտիվ հաճախորդները և acba digital-ի օգտատերերը




- ▶ **Ակթա բանկը** շարունակում է ընդլայնել իր հաճախորդային բազան. 2025թ. 3-րդ եռամսյակի դրությամբ ակտիվ հաճախորդների թիվը գերազանցել է **671,000-ը**, ինչը կազմում է **5% աճ տարեկազբից և 1.4% աճ** նախորդ եռամսյակի համեմատ:
- ▶ Ակթայի ֆիզիկական անձ ակտիվ հաճախորդները կազմում են հանրապետության եկամուտ ստացող աշխատատեղերի թվաքանակի **77.8%-ը (ըստ 2025թ. սեպտեմբերի տվյալների)**, ինչը վկայում է բանկի լայն ընդգրկման և Հայաստանի տնտեսության հետ խոր ինտեգրման մասին:

- ▶ Թվային ներգրավվածությունը շարունակում է մնալ հիմնական աճի շարժիչ ուժերից մեկը. acba digital հավելվածից օգտվող հաճախորդների բաժինը աճել է **66%-ից (2022թ.) մինչև 94% (2025թ. 3-րդ եռամսյակ)**:
- ▶ 2024թ. տարեվերջից հավելվածին միացել է շուրջ 100,000 նոր օգտատեր, ինչի արդյունքում ամսական ակտիվ օգտատերերի թիվը հասել է **362,000-ի՝ ապահովելով 34% աճ տարեկազբից և կազմելով ակտիվ հաճախորդների 54%-ը**:

Ընդհանուր քարտերի քանակը



Գործարքներ ուղիները




- ▶ Քարտերի օգտագործումը շարունակում է աճել՝ թողարկված քարտերի քանակը **գերազանցել է 883,000-ը**, ինչը նշանակում է **13.4% աճ տարեկապից և 4% աճ նախորդ եռամսյակի համեմատ**։
- ▶ American Express քարտերը, որոնք Հայաստանում թողարկվում են բացառապես Ակբա բանկի կողմից, կազմում են ընդհանուր քարտերի **16.7%-ը, ապահովելով 31% աճ տարեկապից և 7% աճ նախորդ եռամսյակի համեմատ**։

- ▶ Ակբան պահպանել է իր **#1 դիրքը քարտերի թողարկման** և գործարքների ծավալով։ Քարտերի մոտ **60%** պատվերները պատվիրվել են թվային եղանակով, ընդգծելով հաճախորդների անցումը ինքնաապաստարկման և թվային հարմարավետության միջավայրի։
- ▶ Չնայած ընդհանուր գործարքների պարբերաբար աճող թվաքանակին, թվային ուղիները (մոբայլ և օնլայն բանկինգ) կազմում են բոլոր գործարքների **2/3-ը (66.4%), տերմինալները՝ 28%**, իսկ մասնաճյուղերի միջոցով գործարքները՝ ընդամենը 5.6%, ինչը վկայում է հաճախորդների կողմից թվային բանկային լուծումների լայն կիրառման մասին։



ՄԵՐ ՀԱՎԵԼՎԱԾԸ

«Լիովին թվային բանկային փորձառություն. պարզ, անվտանգ և ավելին քան բանկինգը»



ԾՈՐՋՈՐՅԱ ԲԱՆԿԱՅԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ

- ▶ Առցանց գրանցում, անվտանգ մուտք
- ▶ Փոխանցումներ և վճարումներ
- ▶ Առցանց պատվերներ, քարտերի արգելափակում և փակում

ԽՆԱՅՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ Լիովին թվային ավանդների ներդրում
- ▶ Ավանդների և հաշիվների առցանց բացում և փակում

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԳՐՈՒԿՆԵՐ

- ▶ Լիովին թվային սպառողական վարկավորում
- ▶ Նախապես հաստատված վարկային

ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐ

- ▶ Առցանց ներդրումային հաշվի բացում
- ▶ Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված արժեթղթերով առևտուր
- ▶ Արժեթղթերի հաշվի կառավարում

ԱՎԵԼԻՆ ԸՆՆ ԲԱՆԿԻՆԳԸ

- ▶ Chatbot
- ▶ Ապահովագրություն - ավտոմեքենայի, ճամփորդության և այլն
- ▶ Կենսաթոշակային ինսյուրություններին հետևել

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

- ▶ Անձնական էջի Նոր ձևավորում միավորված մենյուով և անիմացիոն ավատարներով:
- ▶ Ավելացվել է ծանուցումների կենտրոն (ՆՁ նշանով) բանկի բոլոր հաղորդագրությունները մեկ վայրում:
- ▶ Քարտային գործարքների Push ծանուցումներ SMS ծանուցման փոխարեն (ըստ ցանկության):
- ▶ Հաշվեհամարների, քարտերի, վարկերի և ավանդների ջաղվածքները հասանելի են Նոր ձևաչափերով ներբեռնման համար:
- ▶ PIN-ի վերականգնումը հնարավոր է անմիջապես հավելվածում առանց քարտի փոխարինման:
- ▶ Արգելափակված քարտերի մնացորդները տեսանելի են:
- ▶ Հաճախորդները կարող են դիմել սպառողական վարկի սահմանաչափի համար անմիջապես հավելվածում Նույնիսկ առանց Նախնական հաստատման:
- ▶ Լիզինգի պայմանագրերի տվյալներն ու վճարումների գրաֆիկները հասանելի են հավելվածում:
- ▶ SWIFT փոխանցումները այժմ հնարավոր են արտահանման/ ներմուծման վարկային գծերով փաստաթղթերի վերբեռնմամբ:
- ▶ Դեսպանատան և հարկային տեղեկանքները հնարավոր է ներբեռնել Excel կամ PDF ձևաչափերով:



ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՈՒԲԱՅԼ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ - ՀԱՅԱՍՏԱՆ 2024 INTERNATIONAL FINANCE AWARDS

APP STORE: 4.2/5 (1.2K)

PLAY STORE: 4.5/5 (5K)

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏԿՈՒԹՅՈՒՆ**
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՄԵՐ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ | 2025թ. 3-րդ եռամսյակ

«Բարձր եկամուտները և բաժնետոմսերի աճող արժեքն ընդգծում են Ակբայի կայուն կատարողականը և երկարաժամկետ աճի ներուժը»

14,700 ՀՀ դրամ
3-րդ եռ. ամենաբարձր գինը
(30/09/2025)

14,450 ՀՀ դրամ
3-րդ եռ. բացման գինը
(01/07/2025)

40.5%
Շահույթի եկամտատերություն
(Earnings Yield)
հաշվարկված է 3-րդ եռ. փականան գնով


14,000 ՀՀ դրամ
3-րդ եռ. ամենացածր գինը
(02/07/2025)

14,700 ՀՀ դրամ
3-րդ եռ. փականան գինը
(30/09/2025)

2.47
Գին/Շահույթ գործակից
(Price-to-Earnings, P/E)
հաշվարկված է 3-րդ եռ. փականան գնով

14,294 ՀՀ դրամ
3-րդ եռ. միջին գինը (+10%
նախորդ ժամ. համեմատ)

Բաժնետոմսի շուկայական արժեք (ՀՀ դրամ)



- ▶ Ակբա բանկի բաժնետոմսի գինը **2025թ. 3-րդ եռամսյակի ավարտին կազմել է 14,700 դրամ**, ապահովելով 10% տարեկան աճ և արտացոլելով ներդրողների վստահության շարունակական աճը: Եռամսյակի ընթացքում բաժնետոմսի միջին գինը **կազմել է 14,294 դրամ**, ինչը վկայում է գնի կայունության և աճելու միտման մասին:
- ▶ Եկամտաբերությունը (Earnings Yield, 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ-բաժնետոմսի գին հարաբերակցություն) **կազմել է 40.5%**, արտահայտելով բաժնետոմսերի զգալի թերագնահատվածության մասին և ներկայացնում է արժեքի վրա կենտրոնացած ներդրողների համար գրավիչ հնարավորություն:
- ▶ Գնի-շահույթի հարաբերակցությունը (P/E) **կազմել է 2.5x**, նշանակում է, որ ներդրողները վճարում են ընդամենը 2.5 դրամ՝ մեկ դրամ տարեկան շահույթի դիմաց, ինչը չափազանց ցածր է՝ արտացոլելով բարձր շահութաբերություն և արժեքի զգալի աճի ներուժ:
- ▶ **Ակբայի շահույթի կայուն աճը** և շուկայի ամուր ցուցանիշները ամրապնդում են ներդրողների երկարաժամկետ հետաքրքրությունն ու բաժնետոմսերի արժեքի աճի պոտենցիալը:




ԲԱԺՆԵՏՈՄԱՆԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ | 2025թ. 3-ՐԴ ԵՌԱՄԱՅԱԿ

«Մեկ բաժնետոմսի մեկ բաժնետոմսի եկամտաբերության և հաշվեկշռային արժեքի աճն արտացոլում է կապիտալի աճի ուժեղ ներուժը»

30,673 ՀՀ դրամ

1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը (+13% տարեսկզբից)


Հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



5,957 ՀՀ դրամ


1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ (+26% տարեսկզբից) տարեկանացված

1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի դինամիկան, ՀՀ դրամ



- ▶ 2021 թվականից առ այսօր **Ակբա բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը** զգալիորեն աճել է (**16,035 դրամից մինչև 30,673 դրամ**) պայմանավորված կայուն շահութաբերությամբ և կապիտալի հաջող ավելացմամբ:
- ▶ 2021թ. դեկտեմբերից մինչև 2025թ. 3-րդ եռամսյակի ավարտը 1 բաժնետոմսի **հաշվեկշռային արժեքը** աճել է մոտ 18.5% տարեկան միջին աճի տեմպով (CAGR), իսկ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը մոտ 37%-ով, ինչը վկայում է Բանկի բարձր շահութաբերության, կայուն արժեքի ստեղծման և շուկայական տատանումների նկատմամբ դիմադրողականության մասին:
- ▶ **Հաշվեկշռային արժեքը և մեկ բաժնետոմսի գծով շահույթը** գերազանցել են տարեկան պլանային նպատակները՝ փաստելով բանկի կայուն արդյունավետությունը և բաժնետերերի համար ձևավորվող արժեքի շարունակական աճը:

Ակբա բանկի բաժնետոմսերով գործարքների ծավալները Ֆոնդային բորսայում, մլրդ ՀՀ դրամ




■ Ընդհանուր բաժնետոմսերով գործարքներ

■ Ակբա բանկի բաժնետոմսերով գործարքներ

- ▶ Ակբա բանկի բաժնետոմսերը շարունակում են զբաղեցնել կարևոր դիրք հայկական ֆոնդային բորսայում՝ ապահովելով ընդհանուր բաժնետոմսերի առևտրի ծավալի **24%**-ը և բաժնետոմսերով գործարքների ընդհանուր բանակի **59%-ը**:
- ▶ **2025թ. 3-րդ եռամսյակում** Ակբայի բաժնետոմսերի միջին օրական առևտրային ծավալը կազմել է 154 բաժնետոմս, ինչը 3%-ով ավելի է Նախորդ տարվա նույն ցուցանիշից, վկայելով շուկայի աճող ակտիվության և Ներդրողների հետաքրքրության մասին:
- ▶ Չնայած բարձր շահութաբերությանը և կայուն ցուցանիշներին, Ակբայի գին-շահույթ հարաբերակցության (P/E) ցուցանիշը մնում է ցածր, հիմնականում շուկայի սահմանափակ իրացվելիության և կապիտալի շուկաների զարգացվածության ցածր մակարդակի պատճառով: Ներդրողների ներգրավվածության և առևտրային ակտիվության աճի հետ մեկտեղ, կանխատեսվում է, որ բաժնետոմսի շուկայական արժեքն ավելի լավ կհամապատասխանի հաշվեկշռային արժեքին և և շահութաբերության ներուժին:

Շահույթի բաշխում, մլրդ. ՀՀ դրամ

Վճարման գործակից




2024 թվականի շահութաբաժիններ

1,100 ՀՀ դրամ ((+10% նախորդ տարվա համեմատ)
Շահութաբաժին 1 բաժնետոմսի դիմաց

20%
Շահութաբաժինների վճարման նվազագույն գործակից համաձայն Շահութաբաժնային քաղաքականության

Տեղաբաշխված բաժնետոմսեր, մլն հատ



**ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

Խորհրդի նախագահ

Կառավարման, նշանակումների
և վարձատրությունների
հանձնաժողովի անդամ
Ռիսկերի կառավարման
հանձնաժողովի անդամ
Աուդիտի հանձնաժողովի անդամ

**ԱՐԻՐԱԿ ԶԱՐԻԵ**

Խորհրդի ավագ անկախ անդամ

Կառավարման, նշանակումների
և վարձատրությունների հանձնաժողովի
նախագահ
Ռիսկերի կառավարման
հանձնաժողովի անդամ
Ռազմավարության հանձնաժողովի
անդամ

**ՍՈՆԱ ԻԾԽԱՆՅԱՆ**

Խորհրդի անկախ անդամ

Աուդիտի հանձնաժողովի
նախագահ

**ԱՔՐՆԱՐԴ ԴԸ ՎԻՏ**

Խորհրդի անկախ անդամ

Ռազմավարության հանձնաժողովի
նախագահ

**ԱՆՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Խորհրդի անկախ անդամ

Ռիսկերի կառավարման
հանձնաժողովի նախագահ
Ռազմավարության հանձնաժողովի
անդամ

**ԱՐԱՄ ԲԱԲԵՅԱՆ**

Խորհրդի անդամ

Կառավարման, նշանակումների
և վարձատրությունների
հանձնաժողովի անդամ
Ռազմավարության
հանձնաժողովի անդամ

**ՊԱՅԱՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Խորհրդի անդամ

Ռազմավարության հանձնաժողովի
անդամ

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՓԱԽՉԱՆՅԱՆ**

Խորհրդի անդամ

Կառավարման, նշանակումների
և վարձատրությունների
հանձնաժողովի անդամ

**ՎԱՐԴԱՆ ՌԻՌՈՏՅԱՆ**

Խորհրդի անդամ

Աուդիտի հանձնաժողովի անդամ

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- **ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ**
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ | 2025Թ. 3-ՐԴ ԵՐԱՄՍՅԱԿ

«Արդյունավետ կառավարումը և կապիտալի զարգացումը ամրապնդում են Ակբայի շուկայական առաջատարությունը»

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

- ▶ Գրանցվել է Բանկի կանոնադրության նոր տարբերակը՝ համաձայն բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման:
- ▶ **Սոնա Իշխանյանը** գրանցվել է որպես անկախ խորհրդի անդամ և Նշանակվել է **Առողիտի հանձնաժողովի նախագահ:**
- ▶ Խորհրդի նախագահը և հանձնաժողովների անդամները վերանշանակվել են՝ նոր ժամկետներով:
- ▶ Խմբի կառավարման համակարգը ամրապնդելու նպատակով Ակբա բանկի և Ակբա Լիզինգի համար հաստատվել է **միասնական խորհրդի կազմ:**
- ▶ Խմբի մակարդակով ներդրվել է Շահերի բախման կառավարման նոր քաղաքականություն:
- ▶ Կազմակերպվել է **ներդրողների հեն 2-րդ հանդիպումը**, որտեղ ամփոփվել են 2025թ. առաջին կիսամյակի արդյունքները՝ խթանելով թափանցիկ հաղորդակցությունը:
- ▶ Ակբա Լիզինգը համարել է իր կանոնադրական կապիտալը **8 մլրդ ՀՀ դրամով**, չբաշխված շահույթի հաշվին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

- ▶ **S&P-ն** վերահաստատել է Հայաստանի սուվերեն վարկանիշը՝ **BB- կայուն հեռանկարով:**

- ▶ **ՀՀ կենտրոնական բանկը** պահպանել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը **6.75%** մակարդակում:
- ▶ **Ակբա բանկը** թողարկել է նոր **դրամային և դոլարային պարտատոմսեր**՝ համապատասխանաբար **10.5%** և **5.5%** արժեկտրոնային եկամտաբերությամբ: Թողարկման ծավալը կազմել է **10 մլրդ ՀՀ դրամ** և **10 մլն ԱՄՆ դոլար:**
- ▶ **Moody's-ն** Ակբա բանկին շնորհել է **Ba3** կայուն հեռանկարով վարկանիշ, ամենաբարձրը Հայաստանում և հավասար երկրի սուվերեն վարկանիշին:
- ▶ Թարմացվել են մի շարք ծառայությունների **սակագները**, ինչպես նաև իրականացվել են նոր **արշավներ** քարտերի (**American Express, VISA, Mastercard**), հիփոթեքային,

ՄԱՐԴԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ և ՀԱՄԱՅՆՔ

- ▶ Ներդրվել է **կյանքի ապահովագրության նոր փաթեթ**՝ բոլոր աշխատակիցների համար:
- ▶ Բանկը մասնակցել է **ՀՊՏՀ կարիերայի տոնավաճառին**, ուղիղ կապ հաստատելով ուսանողների և երիտասարդ մասնագետների հետ:
- ▶ Բացվել է նոր **մասնաճյուղը Homplex Mall առևտրի կենտրոնում**, Բանկի առաջին մասնաճյուղը, որն աշխատում է ամեն օր՝ 09:00-22:00:
- ▶ Բացվել է նոր Կորպորատիվ բանկինգի գրասենյակ **Piazza Grande քիզնես կենտրոնում:**



ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ |

2025Թ. 3-ՐԴ ԵՐԱՄՍՅԱԿ

«Շարունակական ուշադրություն մարդկանց, աճի և համայնքների վրա ազդեցության վրա»

ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

- ▶ Գործարկվել է **Apple Pay** ծառայությունը՝ առցանց վաճառողների վճարումների համար:
- ▶ Ներդրվել է **Link Pay** գործիքը, որը հնարավորություն է տալիս բիզնեսներին ընդունել հեռավար վճարումներ առանց կայքի ինտեգրման անհրաժեշտության:

ԹԱՐՄԱՅՎԵԼ Է acba digital ՀԱՐԹԱԿԸ՝ ՆԵՐԱՌԵԼՈՎ ՄԻ ՇԱՐՔ ՆՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ.

- ▶ Լիզինգի պայմանագրերի դիտում և վճարում
- ▶ PIN-ի վերականգնում և նոր ծանուցումներ
- ▶ Դեսպանատների և հարկային տեղեկանքների ներբեռնում
- ▶ Սպառողական վարկային սահմանաչափի դիմում հավելվածի միջոցով
- ▶ Արգելափակված քարտերի մնացորդների և գործարքների դիտում
- ▶ Անձնական էջի նոր ինտերֆեյս՝ ավատարներով և ծանուցումների կենտրոնով

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

- ▶ Ալբան հանդես է եկել որպես **Sevan AgriTech Summit**-ի գլխավոր գործընկեր, ներկայացնելով ագրոտեխնոլոգիական և ֆինանսական նորարարություններ:

- ▶ **Բանկը միացել է Գործընկերություն՝ ածխածնի ֆինանսական հաշվառման համար (PCAF)** գլոբալ նախաձեռնությանը՝ ուղղված ֆինանսավորվող արտանետումները չափելուն:
- ▶ Մասնակցել է **Ասիական Չարգացման Բանկի** կլիմայական ռիսկերի քննարկմանը՝ ներկայացնելով Ալբայի գյուղատնտեսական և կանաչ ֆինանսավորման նախաձեռնությունները:
- ▶ Աջակցել է **NABU-ի «Մաքուր ապագա Սևանի համար»** կամավորական արշավին՝ աշխատակիցների անմիջական մասնակցությամբ:
- ▶ Կազմակերպել է **Ֆինանսական գրագիտության ճամբար** երեխաների համար և իրականացրել է 5 անվճար **ՓՄՁ բիզնես դասընթաց** Հայաստանի տարբեր համայնքներում:
- ▶ Հովանավորել է միջևարդայան ձեռագրի նվիրաբերությունը **Մատենադարանին** և սիմֆոնիկ համերգը Հայաստանի ֆիլհարմոնիայում:
- ▶ **Ստեփան Գիշյան բարեգործական հիմնադրամը** իրականացրել է **«Աշխատանքներ՝ հատուկ կարիքներ** ունեցող **երիտասարդների համար»** ներառական ծրագիրը:
- ▶ **Ամուռի Ալբան** նվիրաբերել է **500 գիրք** Սիփանի գրադարանին, աջակցելով կրթության և մշակույթի զարգացմանը:
- ▶ **Ալբա Լիզինգը** մասնակցել է խոշոր ցուցահանդեսների՝ **Toon Expo, Auto Show** և **MedMeet 2025**, առաջարկելով արտոնյալ ֆինանսավորման պայմաններ տրանսպորտային միջոցների և բժշկական սարքավորումների ձեռքբերման համար:

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- 2025Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ
- **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

հազար ՀՀ դրամ

ԱԿՏԻՎՆԵՐ	30/09/2025 (չստուգված)	31/12/2024 (ստուգված)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	120,064,253	106,030,069
Պահանջներ բանկերի նկատմամբ	40,490,396	81,482,428
Ներդրումային արժեթղթեր	63,784,501	62,108,609
Հաճախորդներին տրված վարկեր	601,375,014	536,210,032
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	100,536,816	93,105,821
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	2,133,542	2,044,092
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	28,832,944	29,114,084
Այլ ակտիվներ	22,909,564	21,443,834
Ընդամենը ակտիվներ	985,432,070	931,697,149
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Բանկերի ավանդներ և մնացորդներ	5,917,231	462,797
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	573,695,120	584,122,036
Թողարկված պարտքային արժեթղթեր	48,973,296	39,408,576
Այլ փոխառություններ	138,728,620	110,883,860
Այլ պարտավորություններ	16,892,370	16,927,858
Ստորադաս վարկեր	13,266,127	12,632,502
Ընդամենը պարտավորություններ	801,853,364	768,256,770
ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	89,775,000	89,775,000
Էմիսիոն եկամուտ	3,811,978	3,811,978
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ	3,517,422	3,517,422
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	3,743,983	3,757,943
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	459,128	304,799
Չբաշխված շահույթ	68,805,540	48,806,987
Ընդամենը կապիտալ	183,578,706	163,440,379
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	985,432,070	931,697,149

Հազ. ՀՀ դրամ	01/01/25-30/09/25 (չստուգված)	01/01/24-30/09/24 (չստուգված)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	67,628,799	58,293,063
Այլ տոկոսային եկամուտ	10,489,134	9,115,101
Տոկոսային ծախս	(29,821,345)	(27,860,792)
Զուտ տոկոսային եկամուտ	48,296,588	39,547,372
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում/ (ծախս)	(2,729,007)	(644,144)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	45,567,581	38,903,229
Միջնորդավճարների գծով եկամուտ	13,399,866	11,195,419
Միջնորդավճարների գծով ծախս	(6,868,301)	(4,563,410)
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(463,535)	114,273
Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից	4,735,858	3,648,014
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	666,453	126,893
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	1,231,605	874,276
(Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով հակադարձում)	841,685	459,967
Ոչ տոկոսային եկամուտ	13,543,631	11,855,432
Անձնակազմի գծով ծախսեր	(16,819,330)	(15,695,163)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,836,423)	(2,680,137)
Այլ գործառնական ծախսեր	(2,266,667)	(1,938,960)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,905,260)	(3,836,994)
Ոչ տոկոսային ծախս	(25,827,680)	(24,151,255)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	33,283,532	26,607,407
Շահութահարկի գծով ծախս	(6,716,034)	(5,211,818)
Հաշվետու տարվա շահույթ	26,567,498	21,395,589



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒ

Սույն ներկայացումը նախատեսված է բացառապես «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի (նաև՝ «Ակբա» կամ «Բանկ») առկա և պոտենցիալ բաժնետերերի, վերլուծաբանների և այլ շահառուների համար՝ ընդհանուր տեղեկատվական նպատակներով, և չպետք է դիտարկվի որպես որևէ հրավեր, առաջարկություն կամ առաջարկ վաճառելու որևէ արժեթղթի կամ որևէ ներդրումային որոշում կայացնելու Բանկի արժեթղթերի հետ կապված որևէ գործարք կնքելու համար: Ակբան որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում այս ներկայացման բովանդակության հիման վրա կայացված որևէ որոշման համար:

Ներկայացումը ներառում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք արտացոլում են ապագա իրադարձությունների, ֆինանսական միտումների և կատարողականի վերաբերյալ ներկայիս սպասումներն ու կանխատեսումները: Նման ապագային ուղղված հայտարարությունները պարունակում են հայտնի և անհայտ ռիսկեր, անորոշություններ և այլ գործոններ: Այս հայտարարությունները հիմնված են Բանկի ներկա և ապագա ռազմավարությունների, ինչպես նաև ապագայում գործելու միջավայրի վերաբերյալ բազմաթիվ ենթադրությունների և գնահատականների վրա: Նման ենթադրություններն ու գնահատականները ներառում են ռիսկեր և անորոշություններ, որոնցից շատերը գտնվում են Ակբայի վերահսկողությունից դուրս: Իրական արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսվածներից կամ ենթադրյալներից: Այս փաստաթղթում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես շահույթի կանխատեսում: Վարկերի և ավանդների եռամսյակային աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2025 թվականի

սեպտեմբերի 30-ի դրությամբ: Տարեկան աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ներկայացումը կարող է պարունակել տվյալներ և վերլուծություններ, որոնք ստացվել են հրապարակային հասանելի աղբյուրներից, Ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշները և բանկային ոլորտի վիճակագրությունը՝ ներկայացման օրվա դրությամբ, և կարող են փոփոխվել առանց նախնական ծանուցման: Ակբան հիմնվում է հուսալի համարվող աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա, բայց չի երաշխավորում դրանց ճշգրտությունը կամ ամբողջականությունը: Ակբան որևէ պարտավորություն չի ստանձնում թարմացնելու կամ վերանայելու այս ներկայացումը կամ այստեղ պարունակվող ապագային ուղղված հայտարարությունները՝ նոր տեղեկատվության, ապագա իրադարձությունների կամ այլ պատճառներով, բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի:

Այս ներկայացման մեջ պարունակվող որոշակի ֆինանսական տեղեկատվություն վերցված է Բանկի՝ առանց արտաքին աուդիտի եզրակացության կառավարչական հաշիվներից և ֆինանսական հաշվետվություններից: Այն ոլորտները, որոնցում կառավարչական հաշիվները կարող են տարբերվել IFRS ստանդարտներից, կարող են նշանակալի լինել: Ներկայացման մեջ ներառված որոշ թվային միավորներ ենթարկվել են կլորացման և ճշգրտումների: Հետևաբար, որոշակի աղյուսակներում որպես ընդհանուր թվեր ներկայացված թվային միավորները կարող են չհամարվել դրանց նախորդող թվերի թվաբանական ամփոփում:



«Կայուն աճ, բարձր շահութաբերություն, ուժեղ կառավարում: Ակբա բանկը լավ դիրքավորված է այսօր արժեք ստեղծելու և ապագայի համար ավելի մեծ հնարավորություններ կառուցելու համար»

Գրանցման հասցե՝

ՀՀ, ք. Երևան, 0002, Արամի փ. 82-84

Կոնտակտային տվյալներ

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ Ներդրողների հետ հարաբերությունների բաժին

Հեռախոսահամար՝ +374 10 318888 (8129); +374 94 700 681

Էլ. փոստ՝ ir@acba.am

www.acba.am